ՀԿԴ/0051/02/24
ՎԴ2/0231/05/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23 ապրիլի 2024 թվական ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՀԿԴ/0051/02/24 (ՎԴ2/0231/05/23) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 11-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. ՀՀ գլխավոր դատախազությունը 2024 թվականի հունիսի 6-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Չարենցավան համայնքի ղեկավարի՝ Չարենցավան համայնքի ղեկավարի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 626 որոշումը և որպես հետևանք՝ Արաիկ Վաչիկի Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն ու սեղանամատյանի գրառումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ պահանջը վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

3. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի ապրիլի 15-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը, 10-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, 128-րդ հոդվածին, ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 67-րդ հոդվածի 1-ին մասին, 68-րդ հոդվածի 1-ին մասին, 70-րդ հոդվածին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի մինչև 2017 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ 4-րդ, 7-րդ հոդվածներին, 16-րդ հոդվածի 20-րդ կետին, 32-րդ հոդվածի 12-րդ կետին, նույն օրենքի՝ գործող խմբագրությամբ 4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/12145/05/13, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/1621/05/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ պահանջը վերահասցեագրել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանն արձանագրում է, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով օտարելու, այդ թվում՝ աճուրդ կազմակերպելու, իրականացնելու և դրա արդյունքները ձևակերպելու և (կամ) հաստատելու*

կապակցությամբ իրավահարաբերությունը ծագել է մասնավոր իրավունքի ոլորտում, քանի որ իրավահարաբերության կողմերը մասնավոր իրավունքի սուբյեկտներ են: Տեղական ինքնակառավարման մարմինը տվյալ իրավահարաբերություններում հանդես չի եկել որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, այլ հանդես գալով համայնքի անունից, աճուրդի միջոցով օտարել է համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս՝ իրացնելով համայնքի՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ քաղաքացիաիրավական բնույթի իրավունքներն ու պարտականությունները: Այլ կերպ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով օտարելու փաստով հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտի (համայնքի) և մյուս կողմի (գնորդին) միջև ծագել են քաղաքացիաիրավական հարաբերություններ, որոնց համայնքը՝ ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների, մասնակցում է քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների հետ հավասար հիմունքներով:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ համայնքի՝ ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր իրավունքի սուբյեկտների միջև համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով օտարելու հետ կապված վեճը բխում է մասնավոր (քաղաքացիաիրավական՝ պայմանագրային) իրավահարաբերությունից և ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով: (...):

Հաշվի առնելով, որ հայցադիմումի հիմնական պահանջով վեճը բխում է մասնավոր (քաղաքացիաիրավական՝ պայմանագրային) իրավահարաբերությունից և ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով և այն, որ հայցը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից՝ պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության նպատակով՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումի պահանջն ըստ ընդդատության պետք է վերահասցեագրել ՀՀ հակակոռուպցիոն դատարանին»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 1-ին, թերթեր 88-95:

հոդվածի 1-4-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 13-ի թիվ 2-2040, 2022 թվականի մայիսի 1-ի թիվ ՎԴ/7612/05/17, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Հայցի առարկան բաղկացած է հիմնական և ածանցյալ պահանջներից, որտեղ Զարենցավան համայնքի ղեկավարի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 626 որոշումն անվավեր ճանաչելու պահանջը հիմնական է, իսկ որպես հետևանք անվավեր ճանաչել ՀՀ կադաստրի կոմիտեում Արաիկ Վաչիկի Սարգսյանի անվամբ գրանցված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումը՝ ածանցյալ:*

Ստացվում է, որ սույն վեճի ինչպես հիմնական, այնպես էլ՝ ածանցյալ պահանջներով կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներ են՝ Զարենցավան համայնքի ղեկավարը և ՀՀ կադաստրի կոմիտեն:

(…)

Պարզ է նաև, որ նշված իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ՝ իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը, քանի որ հանրային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման կազմակերպմանն ուղղված հանրային իրշխանական լիազորություններից բխած գործողություններն են վիճարկվում:

Վարչական դատարանի եզրահանգումն առ այն, որ հայցադիմումի հիմնական պահանջով վեճը բխում է մասնավոր (քաղաքացիաիրավական՝ պայմանագրային) իրավահարաբերությունից, անընդունելի է, քանի որ հողամասի աճուրդի և/կամ հողամասի առուվաճառքի պայմանագրի անվավերության պահանջներ ներկայացված լինելու դեպքում նման եզրահանգումն արդարացված կլիներ:

Ամփոփելով՝ Դատարանն արձանագրում է՝ Վճռաբեկ դատարանի կողմից հանրային իրավահարաբերության գնահատման համար անհրաժեշտ երեք

պայմանների միաժամանակյա առկայությունը սույն գործով ապահովված է ինչպես հիմնական, այնպես էլ՝ ածանցյալ պահանջներով, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով սույն գործով հայցադիմումն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական *հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0051/02/24 (ՎԴ2/0231/05/23) գործն ըստ հայցի՝ ՀՀ գլխավոր դատախազության ընդդեմ Զարենցավան համայնքի ղեկավարի՝ Զարենցավան համայնքի ղեկավարի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 626 որոշումը և որպես հետևանք՝ Արաիկ Վաչիկի Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (…):

3) հակակոռուպցիոն դատարանը»:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը: (…)*

3. Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (…) դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (…)»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական*

---

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 3-6:

դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

(…)

6. *Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:*

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝*«Վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց*

պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով (...)»:*

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Դատախազի կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է վարչական դատավարության կարգով պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը»*:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարբերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛*

օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

Հարկ է նշել նաև, որ Վճռաբեկ դատարանը *ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ Կառավարության՝ թիվ ՎԴ/1951/05/20 վարչական գործով 2021 թվականի նոյեմբերի 09-ի որոշմամբ* արձանագրել է հետևյալը. «*(…) քրեական գործ հարուցելու կամ առնվազն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը ստանալու պահից Դատախազությունը տիրապետում է բավարար տեղեկությունների՝ ՀՀ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի հետևանքով պետության շահերին առնչվող վարչական ակտերի գոյության վերաբերյալ, ուստի այդ պահից էլ Դատախազությունը հնարավորություն է ստանում իրացնել այդ վարչական ակտերը վարչադատավարական կարգով վիճարկելու իր իրավունքը, այն էլ այն պարագայում, եթե նշված վարչական ակտերով վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով»*[4]:

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրը հակակոռուպցիոն դատարանին է վերապահել քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերի քննությունը: Միևնույն ժամանակ օրենսդիրը

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

[4] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կառավարության, երրորդ անձինք ««Գոլդեն Փելիս» հյուրանոց» ՍՊԸ, «Արդշինբանկ» ՓԲԸ, Երևան համայնք*՝ վարչական գործով 2021 թվականի նոյեմբերի 09-ի թիվ ՎԴ/1951/05/20 որոշումը:

սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը, ներառյալ՝ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով: Այդպիսի գործերի շարքին են դասվում ընդդեմ վարչական մարմնի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց, տվյալ դեպքում՝ ՀՀ դատախազության կողմից ներկայացված այն գործերը, որոնցով վերջիններս համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա:

Միաժամանակ, որևէ դատական գործի՝ վարչական կամ հակակոռուպցիոն դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ՀՀ գլխավոր դատախազությունը 2024 թվականի հունիսի 6-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Չարենցավան համայնքի ղեկավարի՝ Չարենցավան համայնքի ղեկավարի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 626 որոշումը և որպես հետևանք՝ Արաիկ Վաչիկի Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն ու սեղանամատյանի գրառումն անվավեր ճանաչելու պահանջի մասին[5],

- սույն գործով պահանջը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով օտարելու փաստով հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտի (համայնքի) և մյուս կողմի (գնորդին) միջև ծագել են քաղաքացիաիրավական հարաբերություններ, որոնց համայնքը՝ ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների, մասնակցում է քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների հետ հավասար հիմունքներով: Ուստի, հաշվի

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

առնելով, որ հայցադիմումի հիմնական պահանջով վեճը բխում է մասնավոր (քաղաքացիաիրավական՝ պայմանագրային) իրավահարաբերությունից և ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով և այն, որ հայցը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից՝ պետության (համայնքի) գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության նպատակով՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումի պահանջն ըստ ընդդատության պետք է վերահասցեագրել ՀՀ հակակոռուպցիոն դատարանին[6],

- ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով, որ սույն վեճի ինչպես հիմնական, այնպես էլ՝ ածանցյալ պահանջներով կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտներ են՝ Զարենցավան համայնքի ղեկավարը և ՀՀ կադաստրի կոմիտեն, նշված իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ՝ իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը, քանի որ վիճարկվում են հանրային սեփականություն հանդիսացող հողամասի օտարման կազմակերպմանն ուղղված հանրային իշխանական լիազորություններից բխած գործողությունները: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի կողմից հանրային իրավահարաբերության գնահատման համար անհրաժեշտ երեք պայմանների միաժամանակյա առկայությունը սույն գործով ապահովված է, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով սույն գործով հայցադիմումն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին[7]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ սույն գործով ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված հայցադիմումով, որպես հիմնական պահանջ, վիճարկվում է Զարենցավան

[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

համայնքի ղեկավարի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 626 որոշումը, որով հաստատվել է քաղաքապետին կից աճուրդային հանձնաժողովի՝ 2010 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 04 արձանագրությունը՝ համայնքի սեփականություն հանդիսացող Շահումյան փողոցին հարող շրջակայքում գտնվող հասարակական կառուցապատման նպատակով 200.0 քմ մակերեսով հողատարածքը աճուրդային եղանակով օտարելու մասին: Նույն որոշմամբ որոշվել է նաև Արաիկ Սարգսյանի հետ կնքել 200.0 քմ մակերեսով Չարենցավան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 1/1 հողատարածքի օտարման պայմանագիր:

Այսինքն՝ հայցադիմումի առարկան կազմող հիմնական պահանջը վերաբերում է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքն Արաիկ Սարգսյանին օտարելու վերաբերյալ Չարենցավան համայնքի ղեկավարի կայացրած որոշման վիճարկմանը, որպիսի իրավահարաբերություններում պետությունը՝ ի դեմս իրավասու վարչական մարմնի, հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, այլ ոչ որպես քաղաքացիաիրավական մասնավոր հարաբերությունների սուբյեկտ: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը ենթակա են ՀՀ վարչական դատարանի իրավասությանը, սույն գործով ՀՀ դատախազությունն իրացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունը՝ մասնավորապես վարչական դատավարության կարգով, օրենքով իրեն վերապահված՝ պետության գույքային շահերի պաշտպանության հայց է ներկայացրել ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ Չարենցավան համայնքի ղեկավարի:

13. Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0051/02/24 (ՎԴ2/0231/05/23) գործն ըստ հայցի՝ ՀՀ գլխավոր դատախազության ընդդեմ Չարենցավան համայնքի ղեկավարի՝ Չարենցավան համայնքի ղեկավարի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 626 որոշումը և որպես հետևանք՝ Արաիկ Վաչիկի Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր է:

Ուստի, ՀՀ գլխավոր դատախազության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՀԿԴ/0051/02/24 (ՎԴ2/0231/05/23) գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՀԿԴ/0051/02/24 (ՎԴ2/0231/05/23) գործն ըստ հայցի՝ ՀՀ գլխավոր դատախազության ընդդեմ Չարենցավան համայնքի ղեկավարի՝ Չարենցավան համայնքի ղեկավարի 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 626 որոշումը և որպես հետևանք՝ Արաիկ Վաչիկի Սարգսյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ